

Թիւնս յաւէտ յիշատակօք անմահ քո սիրոյդ երախտեաց: Մանաւանդ թէ եւ ի տալն քո փոխ ուստի ոչ ունիս ակն առնուլ ըստ աւետարանական օրինաց. որպէս զհարազատի առնիցես զնազարի շէրիֆդ, որպէս արարին նմա զընդունելութիւն Ակնայ եւ Եզնկու մանաւանդ թէ Կարնոյ երեւելիքն ընդ առաջագործօք իւրեանց, յորոց գոհաբան եզէ յերկինս եւ յերկրի բարձր քարոզութեամբ առ ի շնորհակալութիւնս իմ: Այլ ահա՛ օր փրկութեան եւ ժամանակ ընդունելի՝ ըստ փողոյն Տարսնի՝ ցուցանելն քո մարթ է, եւ որպէս ոգիդ վկայէ առ այս՝ բայց եւ իմս եզերեսցին առաջի քո որպէս զնախազուշակ զեկուցմանս, այլ որպէս ազքատ ոք առ թագաւոր ոմն արզուհալք համարեսցին մաղթական բնաւք: Մի՛ մեզ՝ մի՛ մեզ, այլ վասն անուան Տեառն եւ վասն պատուիրանի նորա ընկալեալ զանուն արդարոյ եւ ծանիցիս որպէս զաշակերտ սիրեցեալ նպատակին քո, որպէս եւ եսդ առ ի բազումս հաւասար, զի եւ զհատուցումն քո ընդ ընտրեալ եւ սուրբ առաքելոցն առցես՝ յորժամ դայ փառօք Հօր Աստուածն ի մէջ աստուածացելոց պսակել եւ փառաւորել զսուրբս իւր, ամէն:

Եղեւ գրեալ Երեմիայի՝

Բարունոյ տեառն առաջնորդի

Եկեզեցւոյդ Գաղատացոց,

Մաննօրէն քեւ յարգելոց,

Ի բանդ Նա(յ)եա(\*) թուական Հայկայ,

Առ յելս Յունվար ամսոյն Հոսմայ,

Յանկել սիրոյդ դայս յարակայ,

Ի վեր ձգտեաց քան զկարս ահա՛:

(Ձեռ. Թիւ 1058, րդ. 28բ)

(\*) «Ի բանդ նայեա» = 1134 + 551 = 1685: